№ 265 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2 — 1904 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2 № 265

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր առաջատողին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(33-ՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1905** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ութ ամսվանը՝ 8 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 բուբլի.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի.

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն).

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի հարաւում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օպերային ներկայացումներ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Օդեսայից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սկսում ենք պաշտպանվել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՒՈՒՄ

—

Եւրօպական մամուլի մէջ թէև չը կան մանրամասն տեղեկութիւններ անգլիական այն արշաւանքի մասին, որ ներկայումս կատարվում է հարաւային Պարսկաստանում, բայց լոյս են տեսնում խորհրդածութիւններ և ենթադրութիւններ անգլիական մերձաւոր և հեռաւոր դիտաւորութիւնների մասին այդ երկրի վերաբերութեամբ։

Հեռաւոր դիտաւորութիւնները հեռագրական չեն, որովհետև կասկած չը կայ, որ Անգլիան շատ կը ցանկանար ամբողջ Պարսկաստանը իր ազդեցութեան տակ դնել և նրանից շինել մի այնպիսի երկիր, ինչպէս որ Տիբեթն է։ Եթէ հեռաւոր դիտաւորութիւնների մասին խօսելու լինենք, մենք կարող ենք ասել, որ եւրօպական և ուրիշ մեծ պետութիւնները նոյն ցանկութիւն ունեն թէ Պարսկաստանի և թէ Փոքր Ասիայի վերաբերութեամբ. նոյնը կարող էինք ասել Աւստրիայի մասին բալկանեան թերակղզու վերաբերութեամբ, Եգիպտոսի մասին Չինաստանի վերաբերութեամբ։

Մինչև որ այս կամ այն պետութեան կարողվի իրագործել իր հեռաւոր դիտաւորութիւնները, նա կարող է հանդիպել շատ խոչընդոտների և ստիպված լինել բոլորովին փոխելու իր քաղաքականութեան հեռաւոր նպատակները։

Ուստի աւելի կարևոր է նախատեսել այն մերձաւոր դիտաւորութիւնները, որ ունի այս կամ եւրօպական պետութիւնը արեւելեան երկիրների վերաբերութեամբ։ Որքան մինչև այժմ պարզվել է, Անգլիան ներկայումս ձգտում է ապահովել իր համար հարաւային Պարսկաստանը այնպիսի եղանակով, որ ոչ Ռուսաստանը և ոչ մի ուրիշ պետութիւն չը շոշափեն անգլիական շահերը Պարսկաստանի այդ մասում։ Անգլիան ցանկանում է Հնդկաստանի սահմանների և Փոքր Ասիայի մէջ ունենալ իր տրամադրութեան տակ գտնվող մի անընդհատ զօտի, որով նա իշխէր Պարսից ծոցի և Հնդկական ովկիանոսի հիւսիսային բոլոր ծովափների վրա։ Նա ցանկանում է այդ զօտին իր ձեռքին ունենալ և նրա վերաբերութեամբ բացառիկ արտօնութիւններ վայելել, որպէս զի նա կարող լինի արգելել ուրիշներին ճանապարհ բանալու հիւսիսից դէպի հարաւային մեծ ծովերը։

Դժուար կարելի է հաւատալ, որ Անգլիայի մերձաւոր նպատակները աւելի հեռուները գնային։ Այն էլ, ինչ որ յիշեցինք, Անգլիան պէտք է իր համար մեծ աջողութիւն համարէր, որովհետև Պարսկաստանի քայքայման կամ վերջնականապէս կլանման հարցը դեռ հերթական հարց չէ դարձել և Պարսկաստանի թէև թոյլ, բայց խոհեմ և ճարպիկ քաղաքականութիւնը աշխատում է, որ այդպիսի հերթական հարց առաջ չը գայ քաղաքական ասպարէզում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

Երեքշաբթի, նոյեմբերի 30-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում հանդէս եկաւ երգչուհի օր. Պապայեան Վերոնի «Տրավիատա» օպերայում։ Թիֆլիսի հասարակութիւնը շատապել էր թատրոն ողջունելու իր վաղեմի և սիրված երգչուհուն։ Թատրոնը լիքն էր։

Վիոլետայի դերը, որ կատարում էր Պապայեանը, պարունակում է երգելու առատ և բազմատեսակ նիւթ։ Եւ երգչուհին անցեալներում շատ անգամ է Թիֆլիսում հանդէս եկել այդ դերում և հաճոյք պատճառել հասարակութեան։ Անկասկած, հանդիսականներից շատերը զբաղված էին համեմատութիւններով անցեալի և ներկայի մէջ։ Եւ համեմատութիւնը անպայման նպաստաւոր էր ներկայի՝ վերաբերութեամբ

Պապայեանի ձայնը չէ թուլացել և չէ կորցրել իր ախորժելիութիւնը։ Նա առաջվայ պէս մաքուր է, բաղցրահնչիւն և փայփայում է մարդու լսելիքը։ Նա ստացել է աւելի ճկունութիւն և աւելի ընդունակ է դարձել արտայայտելու նրբութիւններ։ Երգչուհու խաղը ժառանգված է, չափազանց մշակված և համապատասխան հոգեբանական մոմենտներին։

Երգչուհուն ընդունեց հասարակութիւնը ջերմ ողջոյններով և վարձատրվեց բուռն ծափահարութիւններով ու ծաղկեայ պսակով։

Ընդհանրապէս ամբողջ ներկայացումը չէր կարելի համարել կատարելապէս գոհացուցիչ։ Ալֆրէդոի դեր կատարող երգիչ Սիկաչինսկին դեռ սկզբում փոքր ինչ բաւական էր երգում, իսկ յետոյ վերցրեց մի լալկան տոն, որով շատ ձանձրացրեց իրան։ Աւելի գոհացուցիչ էր Ժերմոնի դեր կատարող երգիչ Օբրազցով։

Մենք ենթադրում ենք, որ այդ ներկայացման համար նախնական կրկնողութիւն չէ եղել կամ շատ թերատ, որովհետև երաժշտութիւնը մի քանի տեղերում ուշ էր սկսվում, կամ երգիչները ներդաշնակ չէին գնում երաժշտութեան հետ։ Բացի այդ դերակատարները միապաղաղ մի ամբողջութիւն չէին տալիս դեսպաններին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԿՍՈՒՄ ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ

I

«Մշակին» Դուբայից հաղորդված էր, որ այնտեղ ստացվել է Էջմիածնի Սինոդի մի վերին աստիճանի կարևոր կարգադրութիւնը։ Մեր ամուսնական օրէնքի մէջ աւելանում է մի նոր կէտ. այսուհետև իւրաքանչիւր ամուսնացող երիտասարդ պիտի ներկայացնէ հոգեւոր իշխանութեան և բժշկի վկայականը նրա առողջութեան մասին։ Այսուհետև բժիշկը պիտի որոշէ՝ կարող է այս ինչ մարդը ամուսնանալ թէ ոչ։ Սինոդը յայտնում է, թէ այդ կարգադրութիւնը առում է, հիմնվելով Աստրախանի առաջնորդ Աբրահամէս եպիսկոպոս Սեղբակեանի յայտարարութեան վրա։

Ես տեղեկացայ, որ Թիֆլիսի կօնսիստորիան էլ ստացել է այդպիսի հրաման։ Ուրեմն, Սինոդի այդ կարգադրութիւնը շրջաբերական է, ընդհանուր՝ բոլոր հայ հոգևոր վարչութիւնների համար։

Դա մի չափազանց կարևոր, կարելի է ասել՝ համաձակ քայլ է, որ ունի շատ լայն հասարակական նշանակութիւն։ Երկար տարիների ընթացքում էջմիածինը այնքան խոշոր ըէֆօրմ չէ առաջարկել եկեղեցու հօտին։ Նոյն իսկ չհաւատների հարցին վերաբերող կանոններն էլ չէ կարող համեմատվել այս նոր կարգադրութեան հետ, որովհետև, որքան էլ նրանք նոյնպէս կենսական նշանակութիւն ունենան, բայց շոշափում են համեմատաբար նեղ ու սահմանափակ շրջանների շահերը։ Մինչդեռ այս դէպքում հազարաւոր մարդիկ են շահագրգռված։ Եկեղեցին դուրս է գալիս ձեւական-վարչական աւանդութիւնների սահմանից, նա լոկ հին կանոններ բացատրող, պարզող, ընդարձակող չէ հանդիսանում, այլ շոշափում է իր հօտի ամենակենսական շահերը—նրա առողջութեան, նրա երջանկութեան շահերը։

Եւ եկեղեցին կատարեալ իրաւունք ունի այդպէս վարվելու։ Զէ՞ որ նա է, որ պիտի դարման գտնէ օր օրի վրա աճող չափերով մեծացող դժբախտ ամուսնութիւնների դէմ։ Զէ՞ որ իր ամուսնուց վարակված դժբախտ կինը նրան, այդ եկեղեցուն է դիմում, խընդրելով ջնջել մշտական վարակում, մշտական ցաւ ու դժբախտութիւն ներկայացնող ամուսնական կապը...

II

Եւ ահա ամուսնական արարողութիւնը, որ այնքան մեծ պարտաւորութիւններ է դնում երկու կողմերի վրա, որ այնպիսի սերտ և անխզելի կապերով է կապում երկու մարդկանց մինչև նրանց մահը,—պարտաւորական է դարձնում և այն, որ այդ զուգաւորողները առողջ մարդիկ լինեն։

Կարիք չը կայ, որ մենք բացատրենք այդ նորութեան անգին սոցիալական նշանակութիւնը։

Հարցը նոր չէ, անակնկալութիւն չէ։ Վաղուց նա դարձել է հասարակական հրատապ, տանջող հարցերից մէկը։ Նա միայն մեզ համար գոյութիւն չունի։ Ներկայ ժամանակ, երբ գիտութիւնը այնքան մեծ նուաճումներ է արել հիւանդութիւնների սոցիալական դերը պարզաբանելու մէջ, երբ վարակման և ժառանգականութեան օրէնքները այլ ևս գաղտնիք չեն նրա համար, իւրաքանչիւր հասարակութեան համար տանջալից հարց է դարձել—թ՞ի չպէս պաշտպանվել, թ՞ինչպէս ազատվել այլասերումից, մտաւոր և ֆիզիքական կատարեալ անկումից։

Այո, ծանր, օրհասական հարց։ Երբ մարդկութիւնն ունի այնպիսի անհաշտ, առեալի թշնամիներ, ինչպէս են թոքախտը, սիֆիլիսը և այլ վեներական հիւանդութիւնները, ալկոհոլամոլութիւնը, իւրաքանչիւր հասարակութիւն, որ անհոգ ու անտարբեր անձնատուր է լինում այդ դժոխքի պատիժներին, պիտի ճաս բարով ասէ իր ամբողջ բախտին, իր ապագային, իր կոչման։

Այսպէս է օրէնքը, անողոք, սարսափելի օրէնքը։ Բայց հեշտ է սեփական ձեռքով սեփական մահվան դատավճիռը ստորագրել։ Հեշտ է բաց աչքով, խելքը գլխին քայլել դէպի այն անդունդը, ուր վերջնական խորտակումն է սպասում բաց բերանով։

Ինքնապաշտպանութեան զգացմունքը, ինչպէս գիտէք, ստորին, ամենաթոյլ կենդանիներին անգամ յատուկ է։ Իսկ մարդը, որին տուած է և խելք, և գիտութիւն։ Մթթէ նա պիտի անճար ու անօգնական ճնայ ամէն քայլից սպառնացող վտանգի դիմաց։

Հարցը օրէցօր ծանր, յուսահատական կերպարանք է ընդունում։ Գիտութիւնը, բաց անելով ահաւոր ճշմարտութիւններ, ցոյց է տալիս և փրկութեան միջոցներ—ինչպէս պահպանել հասարակական կենսունակութիւնը, ինչպէս անվնաս դարձնել սոցիալական չարիքները, որոնք օր ու գիշեր, անդադար, կրծում են հասարակութեան հիմքերը։

Այդ միջոցների վրա մտածող հասարակութիւնը չէր կարող սոսկումով չը նկատել վարակման, այլասերման գործը հովանաւորող հաստատութիւններից մէկը—ամուսնութիւնը։ Բժշկական գիտութեան խնամքին յանձնված մի թոքախտաւոր, մի սիֆիլիտիկ խնամքով առանձնացնվում է, դնվում է այնպիսի պայմանների մէջ, որ նա չը կարողանայ վարակել առողջներին։ Իսկ նոյն հիւանդը, որ չէ դիմում բժշկին, կարող է առանց որ և է արգելքի ամուսնանալ մի առողջ ու անարատ մարդու հետ և անպատիժ կերպով վարակել նրան, թունաւորել ոչ միայն նրա ամբողջ կեանքը, այլ և այն դժբախտ սերունդը, որ այդպիսի ամուսնութեան հետևանքն է։

Ահա այս կատարեալ ազատութիւնը, այս անպատիժ վարակումը հարիւրաւոր սարսափելի փաստերով ներկայանում է հասարակութեան համար իր ամբողջ հրէշաւոր կերպարանքով։ Դա նախ և առաջ մի սոսկալի անարդարութիւն է։ Մենք զարհուրում ենք, երբ կարդում ենք թէ ինչպէս էին հին ազգերը մարդկային զոհեր բերում անգութ, ամէն ինչ լափող Բահաղին։ Եւ ի՞նչ։ Մթթէ մենք ինքներս այժմ մեր ձեռքերով նոյն զոհերը չենք տալիս նոյն դաժան Բահաղներին։ Ինչով ենք մենք լաւ հներից։ Բահաղը գոնէ մի անգամից ստանում, ոչնչացնում էր իր զոհերին իր տաքացրած որովայնի մէջ։ Իսկ մեր ժամանակակից Բահաղները միանգամից չեն սպանում, նրանց կրակը դժոխքի կրակների պէս դանդաղ ու անանցնելի է և նրա վրա խորովվում են ամբողջ սերունդներ...

Մտածում են այդ կրակների մասին բոլոր ազգերը։ Մենք էլ նրանցից մէկը։ Մենք էլ մտածել սկսեցինք։

(Կը շարունակվի)

Այդ պատճառով ներկայացման մի քանի տեղեր չը թողին ցանկալի տպաւորութիւն։

Վաղը, ուրբաթ. դեկտեմբերի 3-ին, օր. Պապայեան հանդէս կը դայ Զայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում։

Սիրող

ՆԱՄԱԿ ՊԵՍՏԻԴՕՐՍԿԻՑ

—

Նոյեմբերի 22-ին

Զմեռ ժամանակ Պետերդօրսկի հասարակութիւնը զուրկ է կրթիչ զուարճութիւններից։ Թէպէտ կայ տեղիս ռուս երիտասարդներից բաղկացած մի դերասանական խումբ, որ շաբաթը մէկ անգամ ներկայացումներ է տալիս, բայց դրանց խաղը այնքան թոյլ է, որ եթէ մէկ անգամ առիթ ունեցար տեսնելու, երկրորդ անգամ էլ չես գնայ։

Թէպէտ ունենք քաղաքային ակումբներ, բայց, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և այստեղ, ակումբները այցելողները միայն թղթախաղով են անցկացնում գիշերները և այնպէս էլ թըմբած ուղեղները կանաչ սեղանների շուրջը բթացնում են։

Ինչպէս իր ժամանակին գրել էի, պ. Աբելեանի դերասանական խումբը տեղիս հայ հասարակութիւնը թմրութիւնից մի փոքր հանեց, բայց դա պատահական դէպք էր և անցողական։ Բայց երեկվայ օրը մեզ համոզեց, որ եթէ բարի ցանկութիւն լինի, տեղական ոյժերով միշտ կարելի է կրթիչ զուարճութիւններ ձեռնարկել և առաջ տանել, ահա ձեզ օրինակ երեկվայ օրը։

Երեկ ուսումնարանի դահլիճում Սահակ-Մեսրոպեան 1500 ամեայ երաժշտական երեկոյթ կայացաւ։ Ցերեկով, պատարագից յետոյ, հայր Սարգիսեան գեղեցիկ քարոզ խօսեց հայկական տառերի գիւտի մասին, շեշտելով դրա կատարած դերը հայոց կեանքում և տալով համառօտ կենսագրական տեղեկութիւններ ս. Սահակի և Մեսրոպի մասին։ Երեկոյեան ժամը 7-ին հանդէսը բացվեց երգեցիկ խմբի երգեցողութեամբ, ապա ամբիոն բարձրացաւ տէր-Աբրահամ Շախնեան և խօսեց գրական-երաժշտական երեկոյթների կրթիչ նշանակութեան մասին։ Դրանից յետոյ դուրս եկան աշակերտուհիներ և աշակերտներ ու սկսեցին ռուսերէն արտասանել թէ հայերէն և թէ ռուսերէն։ Հանդիսականները զմայլվում էին լսելով 7—8 տարեկան երեխաների բերանից գիտակցօրէն արտասանած ոտանաւորները։ Ոտանաւորները խնամքով էին ընտրված, որ պատիւ է բերում վարժապետներին։

Պիտի խոստովանած, որ նորեկ վարժուհի և վարժապետ Ամատունի ամուսինները աչքի են ընկնում իրանց գործունէութեամբ, անաարբերութեան մատնված մեր ուսումնարանը կենդանութիւն է ստացել, վարժուհու և աշակերտների յարաբերութիւնները շատ գեղեցիկ տպաւորութիւն գործեցին հանդիսականների վրա։ Դա աչքի էր ընկնում պարերի ժամանակ։ Ուսուցիչ պ. Ամատունի խստեց երեխաների կրթութեան ու դաստիարակութեան և այդ գործում ընտանիքի նշանակութեան և պարտականութեան մասին։ Խօսածը շատ լաւ էր, ամբոխի համար դիւրըմբռնելի, թէպէտ և միակողմանի։ Երեկոյթը շատ ուրախ անցաւ, գրական-բաժշտական մասը վերջացաւ ժամը 10-ին, ապա սկսվեցան պարերը։ Երեխաները աշխուժով լի պարում էին և զուարճանում, իսկ ծնողները հրճվում էին տեսնելով իրանց զաւակների ուրախ դէմքերը։ Չը նայած որ դահլիճը մեծ է, հանդիսականներով ծայրէ ի ծայր լի էր։

Ոբքան լաւ կանէին այդ երեկոյթի կարգադրիչները, եթէ ձմեռ ժամանակ ամիսը մէկ անգամ այդ տեսակ երեկոյթներ սարքէին, երբեմն-երբեմն էլ ներկայացումներ տային։

Դիտող

ՆԱՄԱԿ ՕԴԵՍԱՑԻՑ

—

Նոյեմբերի 12-ին

Այստեղ գոյութիւն ունի մի գաղափարական հիմնարկութիւն, որ տեղական հայ կեանքի միակ դրական երևոյթ է կազմում։ Դա «Օդեսայի հայոց աղքատախնամ հոգաբարձութիւնն» է։

Կարիքը շատ մեծ էր. գաղթականութեան ծայրը հասել էր և այստեղ։ Ի՞նչ անել. անհրաժեշտ էր կազմակերպված օգնութիւն, բաւարարութիւն տալու տեղական, թէ եկւոր աղքատների բազմաթիւ կարիքներին. պահանջվում էր, կը նշանակէ, ժողովրդական-հասարակական ոյժերի լարումն։ Կազմվեց հոգաբարձութիւն, որը և ստացաւ պատշաճաւոր հաստատութիւն։ Բայց քանզի մի արդեօք այդ հիմնարկութիւնը իր կոչման բարձրութեան վրա թէ ոչ այդ հարցով մի քանի անգամ առիթ ունեցանք զբաղվելու «Մշակի» էջերում։ Առանց եռանդի, առանց գործունէութեան, ի հարկէ, ոչ մի բան հեշտութեամբ չէ ձեռք բերվում, պէտք է երբեմն աչքի առաջ ունենալ շատ խոչնդոտներ։ Ուստի, շատ պարզ է, սկիզբը չէ կարող այնքան էլ կատարեալ լինել։ բայց հետզհետէ, հասկանալի է, պէտք էր աւելի ու աւելի եռանդ։ Սակայն հոգաբարձութիւնը ճաց շաբաթի հոգաբարձութիւն միայն։ Առաջին տարվայ սկզբից մոռացվեցին նուէրներ, վերջն էլ կազմակերպվեց հայկական երեկոյթ, որը լրացրեց նիւթականը. դա մուտքն էր։ Տուեցին դիմողներին, պէտք է աւելացնել՝ բաւական խնամքաբար և յաճախ ժլատօրէն՝ այդ էլ ելք էր։

Բայց այդ բոլորը դեռ շատ քիչ է բարեգործութիւն անուանվելու համար։ Եւ այդ մի և նոյնը աւանդաբար անցնում էր յետագայ տարիներին, ոչ մի նոր հոսանք։ Առաջին տարին իր տեղեկագրի վերջում հոգաբարձութիւնը դիմում է տեղացիներին, յայտնելով, որ գործը նոր է, հետևապէս զերծ չէ թերութիւններից, և խնդրում է ներողամիտ լինել և ապագայում էլ աջակցել, որպէս զի հոգաբարձութիւնը հնարաւորութիւն ունենայ «գտնվել իր կոչման բարձրութեան վրա»... Երևակայեցէք, այդ կոչը նոյն բովանդակութեամբ միանգամայն անգիտակցաբար տպագրվում էր և յետագայ տարիների տեղեկագրերի վերջում... Ահա թէ ուր է հասել «շաբլոնը»...

Ներեցէք... Բայց դարձեալ մեր ծխական քահանայի մասին, որին դուք լաւ գիտէք այստեղի դպրոցի մասին դրածս նամակներից. նա կազմում է հոգաբարձութեան գարդը— նրա անդամն է։ Եւ այստեղ էլ, ի հարկէ, նա ամեն ինչ անօրինում է իր ցանկացածին պէս։ Վարչութեան կազմի կէսից աւելին բաղկացած էր «եկւոր» ինտելիգենտներից։ Բայց հէնց այդ «եկւորները» իրանց անհնազանդութեամբ շարունակ զայրացնում էին մեր ծխական քահանային, որովհետև նրանք «անանկ է», «ձեր սատանին պէս է» ի երկրպագուներից չէին։ Ինչ անել, պէտք էր ազատվել չարաճճիներից և ահա եկաւ առիթը։ Անցեալ տարի լրացաւ հոգաբարձուների ժամանակամիջոցը և պէտք էր կատարել նոր ճառագայ ընտրութիւններ։ Ծխական քահանան իր անանից հրաւիրեց ծխականների ժողով, ուր հին հոգաբարձութիւնը պիտի տար իր հաշիւը և հրաժարվելով՝ առաջարկել նոր ընտրութիւններ։ Հաշուետուութիւն չը կայացաւ և մենք նոյն իսկ չիմացանք, թէ ինչ հետևանք ունեցաւ հոգաբարձութեան նախկին տարվայ առաջարկութիւնը՝ ինչպէս գործադրել նրա ազատ դրամագլուխը (տես «Մշակ», 1902, № 126)։ մենք այս ունէինք, որ միւս «եկւորներից» կընտրվէին էլ աւելի եռանդուն ուղիղամտութիւններ։ Բայց ինչպէս կարելի էր դարձեալ դրանց հանկն ընկնել։ Էլ մեր «տէր հայրը» հանեց գոպանից մի ցուցակ և կարդաց մի շարք անծանօթ աղ գանուններ և առաջարկեց ժողովականներին դրանցից, յատկապէս դրանցից հոգաբարձուներ ընտրել։ Այդ բանից զզված, բոլոր «եկւորները» թողին ժողովը ու հեռացան։ Անկարելի էր այլ կերպ վարվել մեր քահանայի ոանձգութիւնների դէմ։ 12 հոգուց բաղկացած ժողովը, կամաւելի ճիշդ է՝ ծխական քահանան՝ կատարեց ընտրութիւններ մի լուրջ հիմնարկութեան համար։ այդ ընտրութիւնները հաստատեց մեր թեմական առաջնորդը, թէև հոգաբարձուների ընտրութիւնը պիտի կայանայ՝ ըստ 2-րդ յօդուածի, 35 ծխականներից բաղկացած ժողովից։ Հոգաբարձութեան դրամարկղը հարստանում է։

«Մշակի» ներկայ տարվայ № 160-ում հաստատել էի, թէ այստեղի դպրոցը այժմ գտնվում է նիւթական նեղ դրութեան մէջ, որով և բացատրվում է «թանգ», բայց բարեխիղճ ուսուցչի հեռացումը։ Հոգաբարձութիւն, որ ի դէպ, ոչնչով չէ հետաքրքրվում, մեր կեանքը նրա համար խորթ է, չը գիտէ ոչ լեզու, ոչ գրականութիւն, ոչ պատմութիւն և ոչ մի բան հայ կեանքից։ Գարշ չէ՞ արդեօք նրա վերաբերմունքը դէպի դպրոցը։ Բայց թող խօսէ նրանց կանոնադրութեան 6-րդ յօդուածը. «Հոգաբարձութիւնը պարտաւոր է հոգալ, միջոցներ տալ հիմնելու հայոց եկեղեցական դպրոցներ»... Բացատրութիւնները աւելորդ են... գոնէ եղածին աջակցեն. բայց աւաղ, հոգաբարձութիւնը տարվել է օրլիգացիաներ առնելու ցաւից...

Աբ. Թոն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, Նոյեմբերի 30-ին

«Քաղաքացին», քննադատելով պ. Յովհաննէս Թումանեանի «Բանաստեղծութիւններ» կոչված գիրքը և անողոք կարծիք յայտնելով նրա մասին, ի միջի այլոց պարոնին և ինձ սխալմամբ եղբայրներիս տեղ է ընդունել։ Այդ անտեղ և ոչ մի նշանակութիւն չունեցող սխալը վերջերս ուղղեցին երկու հայ թերթեր, և ամենքս արդէն իմացանք, որ մենք եղբայրներ չենք։ Սակայն պ. Յովհ. Թումանեանը՝ չը բաւականանալով դրանով, «Մշակի» № 262-ում տպագրվում է աշխարհին, որ նա ինձ եղբայրը չէ և չը պէտք է շփոթիլ նրան մի Թումանեանների հետ, ինչպէս այդ անում են թէ «մանաւոր մարդիկ» և թէ քննադատները։

Չը գիտեմ, թէ ինչ հայկական այդպէս խորշելու «եղբայրութիւնից» և մանաւանդ մէջ արդէն երկու անգամ հրաւված բանը նորից հերքելու, ինչպէս այդ անում է պ. Յովհաննէսը։ Իսկ թէ շփոթում են մեզ իրար հետ, ինչպէս հաւատացնում է պարոնը, այդ ինձ շատ տարօրինակ է թւում։ Գոնէ մինչև հիմա դեռ չէ պատահել, որ ինձ պ. Յովհաննէսի տեղ ընդունեն, թէ մանաւոր մարդիկ և թէ քննադատները։ Ո՞ր խելքը գլխին և պրոկանութեան հետևող քննադատը կը շփոթի ինչպէս պարզ գրվող Յարութիւն և Յովհաննէս անունները։ Գուցէ պատահել է երբ և իցէ, որ հազարից մի ընթերցող շփոթել է մեր անունները, բայց այդ ինչ նշանակութիւն ունի, քանի որ ընթերցողին գրածը է պէտք, ոչ թէ հեղինակի անունը։ Թող պ. Յովհաննէս Թումանեանը այդքան չը վախենայ և չը շփոթվի մեր անուններիս շփոթութիւնից։ Եթէ նրան հասանելիք դափնիները սխալմամբ բերեն ինձ մօտ, ես չեմ ընդունիլ, այլ խնդրում կուղարկեմ իրան...

Յարութիւն Թումանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Էջմիածին, Նոյեմբերի 26-ին

«Մշակի» 256-հաստատում Թաւրիզից գրված թղթակցութեան մէջ ի միջի այլոց յիշվում էր, որ հանդուցեալ Ալիշանի յիշատակին այնտեղ տեղի ունեցած ցերեկոյթին առաջնորդութեան օրօք հանդանակութիւն է բացվել, որի միջոցով հաւաքվել է 200 թումանի։ Թղթակիցը, որպէս գործին անտեղեակ, հարց է տալիս, թէ ո՞ւր են այդ դրամները։

Հետաքրքիր անձանց հաւաքական տալու համար, պարտք եմ համարում յայտնել ճշտիկութիւն, որ ցերեկոյթին լցված հանդանակութեան ժամանակ ստացվել են մօտաւորապէս թուման և ոչ թէ 200, որի ցուցակը և հաւաքված կանխիկ դրամը գտնվում է Աբրամեան դպրոցի ուսուցիչ պ. Վանան Թաշկեանի մօտ, որին և յանձնարարված էր ժողովել ապառիկները և ստացված գումարով լրացնել տալ հայր Ալիշանի երկերը տեղական գրադարանների համար։

Ի դէպ պարտք ենք համարում յայտնել, որ Աւարայրեանի թեմի կենտրոնական դպրոցի համար ստացել ենք կանխիկ 19,315 բուբլի, որից հանելով հեռագիրների և բպրդ. երկու անգամ ապառիկ գնարդ ճանապարհածախսերի մի հարիւր ինսունմեկ և հինգ բուբլի, յանձնել ենք եղբ. Թումանեաններին 19,120 բուբլի։ գրինաւոր ստացականով. այս տարի ևս մեր ստացած տեղեկութիւնների համաձայն նոյն Թումանեան եղբայրներին յանձնվել է հանգուցեալ Ղուկասեանի 1902 թ-ին կտակած 10,000 բուբլի գումարը, որով կենարգնական դպրոցի շինութեան արժէքի՝ 35,000-ի հաշիւից նրանց ստացածը լինում է 29,120 բուբլի։ Նոյն նպատակով ապառիկ մնում է, որ և պէտք է ստացվի՝ Զաքարիա Մելիք-Ազարեանից 2500 բուբլի։ հանգուցեալ Յարութիւն Նազարբէկեանի ժառանգներից՝ 1000 բ., շաշեցի Իսրայէլ մահտեսի Ղազարեանց Բէգլարեանից՝—1000 բ., ա. Նունէ և պ. Արմենակ Ներսիսեան Վարդանեանից մի հարիւր թումանի։ Նոյն նպատակով մնում է ստանալու 4700 բուբլի։

Բացի եղած ժամանակ Երամիշեանները կտակեցին իրանց եղբօր յիշատակին յօգուտ պարսկահայոց կրթական գործին 3000 բուբլի, որը ցայսօր մնում է ապառիկ։

Որովհետև անշուշտ հետաքրքիր կը լինի նաև Մերզաբէկեանների մեր խնդրանօք հանգուցեալ Եղիսաբէթ Մերզաբէկեանի յիշատակին նուիրած արագատիպ տպարանի հաշիւն ևս, որի վրա ծախսված է ստացված գումարից 1000—1200 բուբլի աւելի, խոստանում ենք յարգելի հայ հասարակութեան տալ մանրամասն հաշիւ։ մեր ժամանակվայ հաշէժատեանի խնկականը կամ պատճէնը Թաւրիզից ստանալուց յետոյ։

Եղիշէ ծ. վարդ. Մուրադեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՍԻ

—

Անդրկովկասի գլխաւոր վարչութիւնը թոյլատրել է Կազզուանի տեղական վարչութիւնը իր աւանի պահեստի դրամից վերցնել 4,261 ր. և նրա մի մասն այժմ գործադրել խօլերայի դէմ միջոցներ ձեռք առնելու համար, իսկ միւս մասը միայն այն ժամանակ, երբ խօլերան արդէն մուտ կը գործէ։

—

Թիֆլիսի քարշակի անօնիմ ընկերութեան տեսուչ Գրիգանիսը Բէլգիայից պատասխան է ստացել, որ ընկերութիւնը հաճայն է քաղաքային ուղղաւորի հաւանած պայմանները։ Հաւաքարարից մինչև Նաւթլուղ երկաթուղի անցկացնելու, փոխանակ ձիաքարշի։ Այդ նոր գծի շինութիւնը կը ձեռնարկեն հեռանկար տարի։

—

Ասիրաբադից նոյեմբերի 25-ին հեռագրում են «Բ. Շ.»-ին. «Այսօր հրատարակվեց շրջանի անունով մի հրաման, որի մէջ շրջանի կառավարիչը, մասնացոյց անելով յատկապէս Ասիրաբադի պրիստաւի օգնական Սվանիցկուն անկանոն գործերը, այսինքն այն, որ նա առևտրական Գոլիկովին կալանաւորել էր միայն այն պատճառով, որ վերջինս խօսքակռիւ էր արել մի պարսիկի հետ,—շրջանի ոստիկանական պաշտօնեաների ուշադրութիւնը հրաւիրում է այն քանի վրա, որ անհրաժեշտ է ծայրայեղ զգուշութեամբ կատարեալ ազգաբնակութեան անդամներին։ այդ միջոցին չէ կարելի դիմել առանց օրինական հիմքերի։ Պրիստաւի օգնականին պատիժ նշանակելով, շրջանի կառավարիչը խոստանում է, որ եթէ այդպիսի դէպքեր այսուհետև կրկնվեն, յանցաւոր պաշտօնեաներին դատի կենթարկէ, որովհետև, ասված է հրամանում, ոստիկանութեան նպատակն է ոչ թէ դժուարացնել բնակիչների կեանքը, այլ՝ ընդհակառակը, ամեն կերպ ջանալ թեթևացնել անհրաժեշտ դէպքերում օգնութեան հասնելով։ Միայն օրինական, խիստ, բարեխիղճ վերաբերմունքը դէպի իր պարտականութիւնները կարող են գրաւել ազգաբնակութեան յարգանքը դէպի ոստիկանական պաշտօնեաները և դէպի նրանց արած կարգադրութիւնները»։

—

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ արդէն վճռված է հաւասարացնել բժշկական դպրոցների և գիմնազիաների շրջանաւարտների իրաւունքները համալսարան մտնելու վերաբերութեամբ։ Միայն, ասում է «Русь»-ը, բժշկական դպրոցներն աւարտողները պէտք է տան մի թեթև քննութիւն գիմնազիաներից, ինչպէս այժմ այդ անվում է բժշկական բարձրագոյն կուրսերը մտնելու համար։

—

«Русь»-ը հաղորդում է, որ լուրեր են պատում, թէ արդարադատութեան մինիստրութեան բարձր պաշտօնեաների մէջ մեծամեծ փոփոխութիւններ են լինելու։

—

«Русь»-ը հաղորդում է լիապէս վստահելի աղբիւրներից. «Նոյեմբերի 29-ին, մասալի գործերի գլխաւոր Ն. Բ. Զվերեւովի ընակարանում տասնաւոր խարդախութիւն է կայացել, որի առարկան եղել է մասալի դրութիւնը և նրա իրաւունքներն ու լիազօրութիւնները ընդարձակելու հարցը»։

—

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, 1905 թ-ին սկզբում քննվելու է միջնակարգ և բարձրագոյն դպրոցները, տանել ցանկացող հրէաների իրաւունքներին ընդարձակելու հարցը։ Վերջին ժամանակներս քաղաքային և վարչական հիմնարկութիւններից բազմաթիւ խնդիրներ են ստացվել մինիստրութեան մէջ հրէա երիտասարդներին յիշված դպրոցներն ընդունելու մասին՝ հակառակ գոյութիւն ունեցող 0/0-ի չափին։ Մինիստրութիւնն այդ խնդիրների ու միջնորդութիւնների մեծ մասին բաւարարութիւն է տուել։

—

ՀԱՅԵՐՈՒԹԻՑ, մեզ գրում են. «Այս երկրորդ տարին է, որ մեր դաշտերն աղտոտվում են կարկտից։ Ցորն էլ պակաս չէ նախանցեալ տարիների նման և մանաւանդ այս տարվայ բերքը եթէ առատ չէ, գոնէ որակով լաւ է։ Չենք կարող հպարտանալ մեր հողի տարածութեամբ. չորս հարիւր ծուխ ունեցող գիւղն ունի ընդամենը 600 դեսեատին հող, որի կէսը ժառաւարապէս վարելահողի է յատկացրած, որ անջրդի է և կէսն էլ այգիների է յատկացրած, որ ջրարբի է։ Այս տարվայ ցորենի բերքը թէև միջակից բարձր էր, այնուամենայնիւ գիւղացիները դարձեալ մեծ քանակութեամբ ցորեն են առնում պուդը մի բուբլով, որպէսի գինը ձեռնտու է համարվում մեր տեղը։ Միայն ցորենի ամենաբիչը 10,000 բուբլի կը լինեն ծախսելիս մեր գիւղացիները։ Խաղողի բերքը նոյնպէս միջակ է եղել և եղած խաղողը մաքուր՝ շնորհիւ այն ծծումբի, որին մեր գիւղացիք հաւատացին վերջապէս և որ ցանեցին խաղողի վազերի վրա ու այդպիսով նրան

փրկեցին չոր կոչվող հիւանդութիւնից։ Այս տարվայ գինու որակը, կարելի է ասել, ստոր է, շնորհիւ այն անընդհատ անձրևների, որոնք տեղացին խաղողը հասնելու ժամանակ։ Թթենիների այգիներ ևս ունենք, որոնցից օղի ենք ստանում։ Թութն էլ պակաս էր այս տարի և այս տարվայ բերքի պակասութիւնը նրանից է, որ անցեալ տարվայ բերքն այնքան առատ էր, որ մինչև անգամ խաղողը չը հասաւ։ Մեր գիւղացիները պարապում են նաև շերամապահութեամբ, որ մի լաւ աղբիւր է ապրուստի։ Առհասարակ մեր գիւղի հողը պտղաբեր է, միայն ափսոս, որ հող չը կայ, որ գիւղացին կարողանայ ապրել նրանով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Եապօնացիների ռազմագիտական ծրագիրը բալտիական էսկադրայի դեմ։ Ինչպէս հաղորդում է «Standard» լրագիրը։ ռուսաց ծովապետութիւնը շատ կարևոր տեղեկութիւններ է ստացել եապօնացիների ռազմագիտական ծրագրի մասին 2-րդ խաղաղ-ովկիանեան էսկադրայի դէմ։ Ծովապետ Տոգօի էսկադրան պէտք է կռուի մտնէ ռուսական էսկադրայի հետ առաջ, քան թէ սա կը մտնէ Դեղին ծովը։ Մի և նոյն ժամանակ ծովապետ Ուրիուն ապրանքաց կրէյսէրների թռուցիկ նաւախմբով պէտք է յարձակվէ ածխային նաւերի վրա, կտրէ նրանց էսկադրայից և խորասուզէ։ (Русь)

Ռուսաստանի գնած նոր նաւերը։ «D. Exp.» լրագրի Նիւ-Եորկի թղթակիցը հեռագրում է բոլորովին հաւատի արժանի աղբիւրից. «ես իմացայ, որ Ռուսաստանը ձեռք է բերել արգենտինեան և չիլիական նաւերը։ Բանակցութիւնները, որոնք արդէն վաղուց կատարվում էին Ամերիկայում յայտնի նաւային գործակալ Զարլզ Ֆլինտսի միջոցով, աւարտվել են։ Համաձայնութիւնը վերջնականապէս կայացել է։ Մի քանի շաբաթ սրանից առաջ Ռուսաստանը վճարեց 70 միլիոն ֆունտ ստերլինգ։ (Б. Вѣд.)

Լուրեր Կուրօկիի մասին։ Պատերազմի դաշտից «Русское Слово» լրագրի թղթակից Նեմիրովիչ-Դանչենկոն հեռագրում է նոյեմբերի 24-ին. «Առ այժմ պատերազմական դիրքերի վրա անդորրութիւն է, եթէ չը հաշուենք առաջապահեան ընդհարումները և աննշան հանդիպումները թշնամու հետ։ Այստեղ պատում են քիչ կամ շատ հաւանական լուրեր, որ տարածում են Շախէի այն կողմից եկած չինացիները կամ մեր վերադարձած վիրաւորները և կամ փախստական եապօնացիները, թէ մեռած գեներալ Կուրօկիի տեղ (եթէ միայն ճիշդ է այդ լուրը) հակառակորդի արևելեան բանակի հրամանատարութիւն իր վրա է ստանձնել միկադօի եղբայր գեներալ Սանվանօ, 21 տարեկան։ Նա գտնվում է իր շտաբով Խուան խուադիանում։ Մեր զօրքերը հրաձգութիւններ են անում խրամատների մէջ և ընտելանալով ռազմական գրութեան, քիչ քիչ յարմարվում են այստեղի հետ։ Խրճիթների թիւը աճում է։ Ամեն տեղ փորային տիպը նուազում է։ Սա առաջին պատերազմն է, ուր սպանվածների և վիրաւորների թիւը աւելի շատ է քան հիւանդների թիւը։ Իրանց դիրքերի ետևում եապօնացիները շինում են երկար ժամանակեայ ամրութիւններ Եանտայի և Լեաօեանի առաջ։

Օտարազգի կցորդները մեկնում են։ Մուկդենից հեռագրում են արտասահմանեան լրագիրներին, թէ օտարազգի կցորդները և թղթակիցները հետզհետէ մեկնում են ռուսական բանակից։ Մնացել են միայն 6 թղթակիցներ և դրանցից մի քանին էլ պատրաստվում են մեկնել։ Արդեօք լուրջ ընդհարում կը լինի մինչև գարուն։ Այդ մասին կարծիքները տարբերվում են։ Լուր է պատում, որ եթէ եապօնացիները որոշ բոպէում արշաւում չկան, գեներալ Կուրօպատկինը ինքը արշաւան կը ձեռնարկէ։ Բայց ցոյց տուած բոպէն արդէն հասաւ և ռուսների կողմից շարժման նշաններ չեն երևում։ (Н. Д.)

Ռուսական նաւատորմը ինչպէս է ածուխ ստանում։ «Times» լրագիրը հետևեալն է հաղորդում Ռուսաստանին մինչև այժմ մատակարարված ածխի մասին Անգլիայի կողմից. «Օգոստոսին տասը շոգենաւ գնացին 50—60 հազար տոննն բեռնով. սեպտեմբերին—12 շոգենաւ 50,000 տոննն. հոկտեմբերին—16 շոգենաւ 80—90 հազար տոննն. նոյեմբերին 7 կամ 8 շոգենաւ, 30,000 տոննն։ Օգոստոսին և սեպտեմբերին Համբուրգ-ամերիկեան ընկերութեան վարձու տուած բոլոր շոգենաւերը գնացին Լաս-Պալմաս կամ Տեներիֆ, ուր նրանք միացան բալտիական էսկադրայի հետ։ Միաժամանակ դուրս եկան և անգլիական շոգենաւերը ածուխի բեռնով, որ գնել էին անմիջապէս ռուսները։ Շոգենաւերը իբր թէ, Մանիլլա գնացին և մի մասը աջողութեամբ հասաւ Վլադիվոստոկ։ Այդ նաւերի մէջ միայն մի հատ կար գերմանական «Ցեա» անունով։ Վերջին օրերը նոր պատուէրներ են ստացվել, որոնց կատարումը կապահովացնէ ռուսական նաւատորմը ածուխով մինչև մարտ ամիսը։ Դեռ կան նաև գերմանական վաճառականների պայմանագրերը հարաւային Վալլիսի ածխահանքերի հետ։ (Р. А.)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սարգվար, նոյեմբերի 16-ին

Խորասան նահանգում գլխաւոր արդիւնաբերող ապրանքը բամբակն է. իր սկզբնական մշակութիւնը և արտահանումը շատ սահմանափակ է եղել, սակայն, շնորհիւ հայ վաճառականների, հետզհետէ լայն ծաւալ է ստացել և այսօր արտահանվում է մօտ 300,000 պուդ ապրանք (որից 180,000 պուդ Սարգվարի շրջանում)։

Բամբակը, որակի կողմից շատ հեռու է Երևանի բամակի հետ համեմատելուց. դրա գլխաւոր պատճառները երկու են. 1—բամբակը հասնում է, բայց տեղական կառավարութիւնը թոյլատրած չը լինելով, չէ հնձվում, երբ անձրևներ են գալիս և փչացնում. 2—մշակութիւնը կատարվում է նահապետական ձևով, որով ստացվում է շատ սերմոտ և անմաքուր ապրանք, իսկ հայ վաճառականները, որոնք պէտք ուշադրութիւն դարձնեն սրանց վրա, անում են այն, ինչ որ իրանց պապերից են սովորել։

Քանի տարիներ է, որ նրանք Խորասանից բամբակ են արտահանում, բայց մի անգամ գոնէ չեն մտածել, եւրոպական տիպի մեքենաներ բերել տալ և այդ ապրանքը աւելի մաքուր և գործածութեան համար աւելի պատրաստ կերպով արտասահմանեան վաճառականները փոխադրել. նրանք գնում են նահապետական ձևով մշակված բամբակը, և առանց մի բան աւելացնելու իրանց կողմից, նոյնութեամբ արտահանում են. մինչդեռ նրանք փոքր ի շատ է ծանօթ լինելով եւրոպական արդիւնագործական զարգացման, պարտաւոր են գոնէ փոքր չափով, այն Պարսկաստանում իրագործելու։

Շատ քիչ ժամանակ է, որ Լոդզի մի հարուստ գործարանատէր. Ի. Կ Պօզնանսկու ակցիօներական ընկերութիւնը, առևտրական ճիւղեր է բացել Խորասանում և այսօր նահանգի 2 արդիւնաշատ քաղաքներում ունի եւրոպական վերջին տիպի կատարելագործված մեքենաներ, որոնցով զտված բամբակը, կարող է համեմատել Երևանի բամբակի հետ և որոշ չափով թանկ ծախվել, քան նահապետական ձևով պատրաստվածը։

Հայ վաճառականները, չունենալով նախաձեռնող ոգի, սովորել են միմեանց օրինակի հետևել և անշուշտ իրանց հերթին նրանք էլ կունենան նոյնպիսի մեքենաներ (և արդէն փորձ արվել է եղը. Տէր-Մկրտչեանց յայտնի առևտրական տան կողմից), և երկրի արդիւնագործութիւնը աւելի հաստատ հիմքեր ի վրա կը դնեն նկատի ունենալով, որ իրանք պիտի լինեն եւրոպական կուլտուրան պարսիկ ժողովրդին լայն կերպով ըմբռնել տուողները։

Պէտք է յիշեմ, որ անցեալ 1903 թ. բամբակի բերքը առատ կարելի էր համարել, իսկ առաջիկայ տարվանը անպէտ, քանի որ մորեխը զգալի վնասներ տուեց։

Թաւրիզեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մակեդոնիա։ Որովհետև Բ. Դուռը հրաժարվեց ընդունել նոր ժանդարմերիական օֆիցէրներին, որոնք նշանակվել էին Ռուսաստանի և Աւստրիայի կողմից, ուստի վերջինները վճռեցին գործել առանց նրա համաձայնութեան և ուղղակի Մակեդոնիա ուղարկեցին վեցական օֆիցէրներ։ Այժմ նրանց հետ միացաւ և Իտալիան։ Իտալական կառավարութիւնը հաղորդեց Բ. Դռան, որ կուղարկէ Մակեդոնիա վեց օֆիցէր և կը պահէ նրանց իր հաշուով, մինչև Բ. Դուռը յետ կը կանգնի իր դիմադրութիւնից։ Ռուսական և աւստրիական ժանդարմները արդէն հասել են Մակեդոնիա։ Այդ խնդրի հետ կապված է այժմեան ճգնաժամը Թիւրքիայում. մեծ վեզիրին սպառնում է արձակումն իր պաշտօնից նրա համար, որ չը կարողացաւ համոզել մեծ պետութիւններին յետ կանգնել իրանց դիտաւորութիւնից։

Իտալիան և Բալկանեան թերակղզի։ «Liberté» լրագրի Հռոմի թղթակիցը յայտնում է, թէ իտալական կառավարութիւնը նորերս զբաղված է Ադրիատիական ծովում իր էսկադրան ուժեղացնելու հարցով այն նպատակով, որ ձեռքի տակ ունենայ հզօր նաւատորմ ծովային ցոյցի համար։ Մի և նոյն ժամանակ իտալական դիպլոմատիան, ֆրանսիականի և անգլիականի հետ, իբր թէ աշխատում են ստեղծել Բալկանեան պետութիւնների դաշնակցութիւն։

Թիւրքիա։ «Իգդամ» կիսապաշտօնական թիւրք լրագիրը հաղորդում է, որ սուլթանը իրաւէ է հրատարակել, որով հրամայում է ընդունել հայ որբերին կրթական հաստատութիւնները պետական հաշուով։

—«Մուվազինէ» լրագիրը հաղորդում է, թէ այս օրերս Կ. Պոլսում կալանաւորվից ոստիկանութեան մինիստրի որդին, որ մեղադրվում է երիտասարդ թիւրքերի հետ իբրև մեղսակից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ, 30, նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Գենեբալ Կիչինէր ներկայումս զբաղված է այն հարցով, թէ որքան պէտք է լինի հնդկական զօրքի թիւը հնարաւոր յարձակման դէպքում, եթէ համարել հակառակորդի ոյժերը մօտաւորապէս 500 հազար։ Հնդկաստանը կարող կը լինէր դէպի սահմանն ուղարկել 160,000 մարդ 350 թնդանօթներով և ասպարէզ բերել 136,000 պահեստի զօրքեր։ Անհրաժեշտ է, հետևաբար, նշանաւոր չափով մեծացնել հնդկական զօրքը։ Իբր թէ նախագիծ կայ կազմել բիրդապահ զօրքեր կամաւորներից, նոյնպէս և բերել տալ զօրքեր Կանադայից, Աֆրիկայից և Աւստրալիայից։ Զինուորական մինիստրը հաղորդեց Նիւկէսլում արտասանած ճառի մէջ մի հատուած գեներալ Համիլտոնի նամակից, որ ուղարկված էր եապօնական բանակը։ Գեներալն ասում է, ի միջի այլոց. «Այդ պատերազմը զարթեցրեց իմ մէջ այրող գիտակցութիւն, որ մեր զօրքի դրութիւնը սաստիկ վտանգ է սպառնում երկրի գոյութեանը»։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 30 նոյեմբերի։ Պատգամաւորների ժողովի այսօրվայ նիստի բացումից առաջ, դիմադրական կուսակցութիւնը քանդեց նախագահի էստրադան և տեղերը մինիստրների համար և դուրս վռնդեց դահլիճից պարլամենտական պահպան խումբը։ Նիստը չը բացվեց։ Ազատամիտները խորհրդակցում են գործունէութեան ապագայ եղանակի վերաբերմամբ։

ՊՕԼՏԱՎԱ։ Իր կալուածքում Պոլտավայի մօտ վախճանվեց յայտնի վիրաբոյժ պրոֆէսօր Սկլիֆասովսկի։

Կ. ՊՕԼԻՍ։ (Կորր. Բիւրօ), նոյեմբերի 29-ին. Իրանց պատասխանի մէջ Բ. Դրանը դաշնադիր պետութիւնների դեսպանները պնդում են իրանց տեսակէտի վրա օտար օֆիցէրների թիւի մեծացնելու վերաբերմամբ մակեդոնական ժանդարմէրիայում։

ՊԱՐԻԶ, 30 նոյեմբերի։ Հուլի դէպքի առիթով կազմած միջազգային քննիչ յանձնաժողովը կը դադարվի արտաքին գործերի մինիստրութեան մէջ հաւանականօրէն դեկտեմբերի 7-ին և 8-ին։ Առաջին նիստում յանձնաժողովը կընտրէ հինգերորդ անդամ, և ապա կը յետաձգէ նիստերը մինչև յունվարը նոր տարով, երբ կը սկսէ աշխատանքները։ Շահագրգռված պետութիւնները կը վճռեն նիստերի հրապարակական լինելու հարցը։—Լուբէն ընդունեց Պետերբուրգի դեսպան Բօմպարին։

ԿԻԵՎ, 30 նոյեմբերի։ Եկեվի Կարմիր Խաչի վարչութիւնը, ծանօթանալով «Сынъ Отечества» լրագրում տպված «Կիեվի խայտառակութիւնը» վերնագիրը կրող յօդուածի բովանդակութեան հետ, և ի նկատի ունենալով այդ յօդուածի մէջ բերված փաստերի կատարեալ ստութիւնը, միաձայն որոշեց դատ բանալ ամբաստանութեան համար։

1 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանի վճռով նոյեմբերի 30-ին, ներքին գործերի մինիստր Պլեվէին սպանողները դատապարտվեցին՝ Սազօնով—ցմահ տաժանակիր աշխատանքների և Սիկօրսկի—քսան տարով տաժանակիր աշխատանքներին։

ԼԻՍՍԱԲՕՆ, 30 նոյեմբերի։ Մօսսամեդէս եկան 21 ռուսական նաւեր Հեռաւոր Արևելք գնալու համար։

ՊԱՐԻԶ, 30 նոյեմբերի։ Բօմպար դեսպանը «Տան» լրագրի թղթակցի հետ խօսակցելու ժամանակ յայտնեց, որ Ռուսաստանը աւելի քան երբ և իցէ ժամադրութիւն ունի ամեն միջոց գործ դնել կարգական հետևանքների հասնելու համար Հեռաւոր Արևելքում։ Եռանդով շարունակում են ուղարկել զօրքեր, մթերքներ և ռազմամթերքներ։ Կուրոպատկին այժմ իր տրամադրութեան տակ ունի առաջնակարգ զօրք։ Ստեսսել բռնում է եապօնացիներին և սպառում է նրանց ոյժերը։ Ֆինանսական դրութիւնը հիանալի է։ Ռուսաստանը օգուտ կը քաղէ իր նիւթական միջոցների պաշարներով։ Նրա մետալուրգիական արդիւնաբերութեան ռէսուրսները հնարաւորութիւն կը տան նրան դիմելու արտաքին աջակցութեանը միայն սահմանափակ չափերով, իսկ եթէ այդպիսի դիմումի անհրաժեշտութիւն լինի, Ֆրանսիային կը տրվի մասնակցութեան ամենաընդարձակ բաժին պատուէրների մէջ։

ՍՈՒԴԱ, 30 նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Եկաւ ռուսական «Իզումրուդ» կրէյսէրը։

ՀԱԱԳԱ, 30 նոյեմբերի։ Պատերազմի ժամանակ լողացող հիւանդանոցների դրութիւնը քննելու համար դիպլոմատիական կոնֆէրէնցիան բացեց արտաքին գործերի մինիստրը։

ՀՕՄԷԼ, 30 նոյեմբերի։ Հրէական գործի մէջ դեռ ևս հարց ու փորձի են ենթարկվելու 404 վկաներ։ Գործը դանդաղ է առաջ գնում առանց առանձին ինցիդէնտների, թէպէտ և այդպիսի ինցիդէնտներ հրէայ թղթակիցները հաղորդում են ամենօրեայ լրագրութեան հաղորդագրութիւնների մէջ։ Դրանք մեծ մասամբ միակողմանի և տենդէնցիոզ հաղորդագրութիւններ են, որոնք ձգտում են ամեն բանի մէջ սպիտակեցնել հրէաներին, մեղքի ամբողջ ծանրութիւնը գցելով ռուսական ազգաբնակութեան, ադմինիստրացիայի և զօրքի վրա, անարդար կերպով նկարագրելով դատարանը կողմնապահութեամբ բարեհաճ դէպի ռուսական պաշտպանութիւնը և ռուս մեղադրեալները,—ճնշող տպաւորութիւն են գործում ռուս հասարակութեան վրա և սրում են ռուսներին և հրէաների առանց այն էլ լարված փոխադարձ յարաբերութիւնները։

1 դեկտեմբերի

ՄՈՒԿԴԷՆ, 1 դեկտեմբերի։ Դիրքերի վրա ամեն ինչ հանգիստ է։ Զօրքերը կատարելապէս ապահովված են գետնափորներով, վառելիքով և հագուստով։ Չը նայելով սաստիկ սառնամանիքներին սառչելու դէպքեր չը կան, հիւանդացողներ նոյնպէս։ Շանխայգուի-Սինմինտին երկաթուղին գտնվում է եապօնացիների զօրեղ ազդեցութեան շրջանում. ժամանակ դա նկատելի է Շանխայգուանի և Կուրանգվիի միջև։ Ինկօու նաւահանգիստը կատարելապէս փակվեց։ Միջին թւով գիշերային ցրտերը հասնում են 14 աստիճանի։ Եապօնացիները բոլորը հիւանդանում են։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային դուման, չքաւորների վերաբերեալ քաղաքային հոգաբարձութիւնների տասնամեակի առիթով, մեծացրեց տարեկան սուբսիդիան հոգաբարձութիւններին հազար ռուբլի իւրաքանչիւրին։ Նահանգական զեմս-վոյի նախահաշիւը ժողովրդական կրթութեան համար հաշուած է 338,000 ռուբլի։ Աւարտված է զպրոցական այն ցանցի 97%, որ նշանակված է տարրական կրթութեան հանրամատչելիութիւնը լրացնելու համար նահանգում։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ։ Նահանգական դատարանի քրէական նստաշրջանը աւարտվելուց յետոյ երդուեալների ատեան Մօկրժէցկի երդուեալ դատաւորների անունից կը յանձնէ դատարանի նախագահին միջնորդութիւն դատաստանական կանոնադրութիւնները սկզբնական ձևով վերականգնելու մասին։ Նախագահը խոստացաւ մտցնել այդ միջնորդութիւնը դատարանի ընդհանուր ժողովի քննութեանը։

Կ. ՊՕԼԻՍ։ Բոլոր մնացած դեսպանները միացան դաշնադիր պետութիւնների դեսպանների վերջին առաջադրութիւններին չէտանների անկարգութիւնների և քրիստոնեայ ազգութիւնների փոխադարձ կռուի առիթով Մակեդոնիայում։ Բ. Դուռը վճռեց բամազանից յետոյ լուրջ փոփոխութիւններ կատարել Սալոնիկի վիլայէտի զինուորական վարչութեան մէջ։ Նազիր-փաշան ուղարկված է Սալոնիկ յատուկ յանձնարարութեամբ դեկավարել չէտանները կատարելապէս ջնջելու գործը։

ՍՕՖԻԱ։ Քաղաքացիական գործակալները Մակեդոնիայում ուշադրութիւն դարձրին բոլգարական համայնքների գանգատների վրա բոլգարական ուսուցիչներին դպրոցներից հեռացնելու վերաբերմամբ նրանց վատ ընթացքի պատրուակով։ Հիլմի-փաշան խոստացաւ, որ այսուհետև դպրոցների վրա հսկողութիւն կը կենտրոնացվի բարձր իշխանութիւնների ձեռքում, որոնք կը գործեն հանգամանքների մանրազնին քննութեան հիման վրա։ Հիլմի-

փաշան կարգելէ տեղական իշխանութիւններին միջամտել զպրոցական գործերում։

ՇԱՆԳՀԱՅ, 30 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ «Ակօլզը» շարունակվում է բեռնվել ածուխով և արդէն վերցրեց 1000 տոնն։ Հրամանատարը հրապարակապէս հսկում է բեռնելու ընթացքին, որը վաղը կաւարտվի։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Սէուլի վրայով ստացված հաղորդագրութեան համեմատ, եապօնական զօրաբաժինը Նոյեմբերի 23-ին դիշերը յարձակում գործեց 200 կազակներին Ֆիոնչէնի շրջականերում և հարկադրեց նրանց նահանջել դէպի Պէժտինշան վեց ժոն դէպի հիւսիս։ Ռուսները թողին վեց սպանվածներ, 22 հրացան և երեք ձի։

ԱԹԷՆՔ։ (Ռէյտէր)։ Ակռնանաւ «Գրօզնի» եկար Պիրէյ, ընասուցիներ ունենալով մեքենաների բաժնում։

ՋԻՖՈՒ։ 30 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Դալնիից եկած մի անձն հաղորդում է, թէ Նոյեմբերի 17-ին Պօրտ-Արտուրի մօտ ռուսական մի ականանաւ ջրասոյզ արեց եապօնական զինուորական նաւերից մէկին, որ իր չափերով «Սայեանից» մեծ էր։ Նոյեմբերի 12-ին եապօնական շրջանաւը ջրասոյզ արեց ռուսական երկու ականանաւերի, որոնք դուրս էին եկել Պօրտ-Արտուրից։—Մօտ 400 հիւանդներ և վիրաւորվածներ, որոնք գալիս են հիւսիսից, իւրաքանչիւր օր ուղարկվում են Դալնիից դէպի Եապօնիա։

ՄԻՆՍԿ։ Սլեավանիշչի և Պոնեմուկ կայարանների միջև, Լիբավա-բոմենեան երկաթուղային գծի վրա, ապրանքատար գնացքի վագոնները բաժանվեցին միմեանցից։ Պատճառը չէ պարզված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գէներալ-լեյտէնանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին. 1) 1904 թւի Նոյեմբերի 30-ից. «Նոյեմբերի 30-ի գիշերը զեկուցումներ պատերազմական ընդհարումների մասին չեն ստացված։ Ցուրտը գիշերը հասնում է 23 աստիճանի։ Զօրքի մէջ ամեն ինչ բարեյաջող է»։—2) 1904 թւի դեկտեմբերի 1-ին. «Դեկտեմբերի 1-ի գիշերը զեկուցումներ պատերազմական ընդհարումների մասին չեն ստացված։ Ցուրտը հասնում է գիշերով 17 աստիճանի»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄՍՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վերօնցովի աբգանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ԶԻԿՕՎԻՆ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲՈԲԱՆԵՍԵՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵՍԵՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵՍԵՆՑ—1-1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ ատամնաբույժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻՆ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵՍԵՆՑ—7½—8 ժ.
Պ. Ա. ԱՐԳԱՋԻՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոսկոպիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԳԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական ժարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. դրա տները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր 12—2 առաւօտ. և 6—8 երեկ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի—դեղատան կից։ (Ե. Հ. Շ.) 10—10

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ ոտն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլօլակի փող. № 6.
(ա. օ.) 11—50

Շարունակվում է
Ազգագրական-Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսնող
Ազգագրական Հանդիսի
XI և XII գրքերի
Բաժանորդագրութիւնը։
Բաժանորդագինն է 3 ռուբլի
XI գիրքն արդէն լոյս է տեսել, իսկ XII լոյս կը տեսնի այս տարվայ վերջին։ Նախկին գրքերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդագրական գնով։
Դիմել՝ Երուանդ Լալայանցէ, Саперная 5 Тифлисъ. 1—3

Տպագրված է և շուտով լոյս կը տեսնէ
6000 օր. ԹՈՄԱՍ ԲՕՅՏԱՐԻՍ
Յունաստանի յեղ. կեանքից վերցրած հրաշալի պատմուածքը։
Գինն է 5 կոպ. գումարով գնողներին որոշ զեղչ կանվի։
Դիմել՝ Баку. типографія «Араръ», Овакиму Степанянцу. (հ. շ.) 1—2

ՄԱՅԿՕՊՈՒՄ
Մի հայ ընտանիքում հարկաւոր է մի հայ օրիորդ 3 երեխայի նայելու և սովորեցնելու հայերէն, ֆրանսերէն ու ռուսերէն։ Երեխաներից երկուսը գիտեն հայերէն գրել կարդալ։ Ցանկացողները թող դիմեն—Майкопъ, Куб. об. Вартану Сагинову.
(հ. շ. կ. ո.) 1—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ո. կ. ե. հ.) 63—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեամինսկայա փ. № 8.
ա. օ. 16—100

Շաբաթ, դեկտեմբերի 4-ին նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Ընդհանուր հիմքերով։

Թարգմանել եմ և արդէն թոյլատրված է խաղալու
Վ. Վ. ՊՐՕՏՕՊՊՕՎԻ
ԿԵԱՆՔԻՑ ԴՈՒՐՍ
4 գործողութեամբ պիէսը։
Մն. Գուլազեան

ԼԱՒԱԳՈՅՆ
ԾԱՂԿԷ
Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
№ 4711
ՀՈՒՆՈՍԵԱՆ ՓՈՒՆՋԵՐ
Թաշկինակների համար գերազանց և տեսողական ու էժանագին դուխի
Բոլոր ծաղիկների և մօդային հոտերով
№ 153,779/84 2—6
Ն. 6, դ. 1, 25, փ. 9, մ. 16. ա. 20

Թիֆլիսի Ազնուականների պատգամաւորական Ժողովը, ձեռնարկել է ազնուականների տոհմագրական գրքերի կազմութեանը և սկսել է կազմել հետևեալ ընտանիքների տոհմագրութիւնը. Աբաշիձե, Աբխազի, Ամամելիքովներ, Ավալովներ, Ամատունովներ, Աբիլախովի, Ամիրաջիբի, Բագրատիոն-Մուխրանսկիներ, Բագրատիոն-Դաւիդովներ, Բարատովներ, Բեբութովներ, Բեկթաբեկովներ, Վախվախովներ-Վաչինաձե, Վեզիրովներ, Գուլգինսկիներ, Փուրամովներ, Զանդիերի, Զորգաձե, Լիսինիձե, Մա, գ[illegible]ովներ, Մելիքովներ եւ Մաչաբելի, խնդրում է վերոյիշեալ ընտանիքներին պատկանող անձերին, որոնք ցանկանում են արագել տոհմագրութեան մէջ մտած տեղեկութիւնների լիակատարութիւնը և կանոնաւորութիւնը, դիմել Պատգամաւորների Ժողովին (Սօլօլակի փողոց № 10), շաբաթ օրերը, ցերեկվայ ժամը 11—12-ին։ 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Ջեռնարկութիւն Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի
Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 2-ին, մասնակցութեամբ տ. տ. Դոնսկոյ Էյխենվալդի, Տօմկեվիչի, Խարիտոնովայի, Միխայլովայի. պ.պ. Դոնսկոյի, Պոլուեանովի, Դալեցկու, Պոբուբինովսկու, Սպիրանսկու, Բագրովի, Զալինսկու, Ալտշուլերի և Մուրատովի.
կը ներկայացնէ
ԲՕՐԻՍ ԳՕԴՈՒՆՕՎ
օպերա 4 գործ. նախաբանով և 6 պատկ.
երաժշ. Մուսորսկու։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Վաղը, ուրբաթ, դեկտեմբերի 3-ին կայսերական թատրոնների արտիստուհի Ն. Ա. ՊԱՊՅԵՍԱՆԻ երկրորդ գաստրոլ և Վ. Ի. Լազարեվայի 3-րդ դերիւտ ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ, կը ներկայացվի ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ, օպեր. 3 գործ. երաժ. Չայկովսկու։ Շաբաթ, դեկտեմբերի 4-ին 8-րդ «գալա» ներկայացում մասնակցութեամբ Լ. Դ. Դոնսկոյի, կը ներկայացվի առաջին անգամ Թիֆլիսի արքունական թատրոնի բեմի վրա ՄԱՆՕՆ, օպեր. 5 գործ. երաժ. Մասսընէի։
Պատրաստվում են ներկայացնելու ՄԱՆԴԱՐԻՆԻ ՈՐԴԻ, օպեր. 1 գործ. երաժ. Կիւի.
1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէյտէր

Գուստեանիերից

գրախանութում վաճառվում են.

Լէօ, Ռուսահայոց գրականութիւնը ըստ կզբից մինչև մեր օրերը լ.	1 50
Փափազեան Վ., Պատմուածքներ թիւրքահայերի կեանքից	1 —
Եղիշէի պատմ. Վարդ. անձնացեացն օր.	— 20
Լաութիւնը, Ահարոնեանի	— 60
Արտը, »	— 80
Մրրկի սուլը »	1 —
Իտալիայում »	1 50
Իշխանն ու աղքատը, Մարկ Առէնի, թարգմ. Դր. Շահ.	1 —
Գոլոր գործ է պահանջում, թարգ. Զ լ.	— 40
Արիութեան թեները Ժ. Զանդի, պատկ.	— 30
Համով հոտով, Սրուանձտեանի	1 25
Գող Մժգ. Վասպուրականի իրական կեանքի, Նշիկ Երէցի	— 80
Գերմ. մանկ. բարձ. հատատութ. Ի. Յ.	— 40
Աշակերտների յուշատետրը, նոյնի	— 30
Ռմ օրագիր, նոյնի	— 25
Ռամկական մրմունջներ, Բրուտեանի	— 60
Պատմութիւն հայ ց Զագճեանի	1 50
Սոխակ Հայաստանի, Գր. ք. Գրիգոր.	1 20
Թիւրքահայերի անտես. դրութ. Գր. Արծ.	— 20

Դիմել. Тифлисъ: Книжный магазинъ „Гутенбергъ“ Г. Галустяну. 1—3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՂՈՒՄՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.
1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական։ գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագիր ամենավաղ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համարիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Էյմենկոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։
Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործիչ մասնագէտ մարդիկ, որոնք հասատավել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։
Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 թւի յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4½ ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ, ըստ ված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիս, Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծանուցագիրն ուղարկվում է ձրի։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 1—20

Բոլորովին պատրաստ են և վաճառվում են Ե. Թոփչեանի խմբագրած պատկերազարդ
„ԼՈՅՍ“
1905 թ. ԳՐՊԱՆԻ եւ ՊԱՏԻ օրացոյցները հետեւեալ բովանդակութեամբ.

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ մեծացրած գիրքով 302 եր., 14 գունատիպ պատկերներ, չը հաշուելով 12 ամիսների պատկերները և զարդանկարները։ Շապիկը՝ Արարատ և Անիի տեսարաններից. յաւելուածը բազմաթիւ գործնական տեղեկութիւններ՝ եկեղեցական, վիճակագրական, իրաւաբանական, վաճառականական, ճանապարհորդական, դիւորագրական, բժշկական, անասնաբուժական, կենսաբանական, աստղագիտական, ընագիտական, երկրագործական, կաթնատնտես., մեղուապահական, թռչնապահական, գիտական, զուարճալիք, կենսագրութիւններ և այլն և այլն։ Ի միջի այլոց պրոֆէսորներ Իւնգի և Վագների, Լունկեվիչի, Մեծատուրեանի, Ղազարեանի, Թոփչեանի, բժիշկներ ու բժշկապեներ Արծրունու, Բուդուղեանի, Գէորգբէգեանի, Նաւասարդեանի, Տէր Գրիգորեանի, Քալանթարեանի ու Մակարեանի յօդուածները։ Գինը 20 կոպ.

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ մեծացրած գիրքով, բոլորովին նոր բովանդակութեամբ, 2 գոյնով տպած. ՏԱԽՏԱԿԸ «12 ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ» գունատիպ պատկերը, նաև Արարատ ու Հնութ. տեսարաններ։ Յաւելուածը—նշանաւոր դէպքեր, ընտիր մտքեր, հայ և օտար ազգի առածներ ու հանելուկներ. տների բացատրութիւններ, արձակ բանաստեղծութիւններ, աշուղական մրմունջներ, ընտիր հատուածներ, ժողովրդական երգեր, գիւղատնտես., անասնաբուժ., կաթնատնտես., երկրագործ. տեղեկութիւններ, ընագիտ. դրոյցներ, զուարճալի հատուածներ, անեկդոտներ, բառախաղեր, օգտակար խորհուրդներ, նոր գիւտեր, ամեն հարցեր. մեծ մարդկանց վերջին խօսքը. Սասուն. Խիկարի գուշակութիւնները. Հայոց պատմ. էջերից. նժուշներ կենդանիների կեանքից. թարգմ. հատուածներ. Հայրենասիրութիւն և մարդասիրութիւն (զան. կարծիքներ). Տղամարդիկ ինչպիսի կին են ուզում (զան. կարծիքներ)։ Նաև Խրիմեան հայրիկի «Խրատները» (40 առանձին հատուածներ), բժ. Արծրունու «Բժշկի պատուիրանները» (8 հատ.), բժ. Բուդուղեանի «Տնային մարմնամարզութիւն» (24 հատ.), Զէյթունցիի «Նմուշներ զէյթունցիների կեանքից» (30 հատուած), Մէլիք-Բախտ. «Ինչպէս են մուրաբաներ եփում և պտուղներ թթու դնում», տիկ. Հրանոյշի «Տանտիկնոջ դերը», Թոփչեանի «Տղամարդը և կինը»։ «Ի՞նչ երկիր է Եապօնիան»։ «Ինչպէս են ապրում եապօնացիները» և այլն և այլն։ Բացի այդ բոլորից պատի օրացոյցի մէջ կան 22 պատկերներ և առանձին թերթիկներով յաւելուածներ. նաև առանձին ՅԱԻԵԼՈՒԱԾ ԳՐՔՈՅԿ «Հայ բանաստեղծների» կենսագրութիւններն ու ինքնակենսագրութիւնները (յատկապէս «Լոյսի» համար գրած)։ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ—60 կտոր գիրք նշանաւոր հեղինակների գրուածքներից։ Գինը 50 կոպ. Գումարով գնողներին ձեռնտու զեղչ։

Շուտով պատրաստ կը լինի ՍԵՂԱՆԻ «ԼՈՅՍ» ՕՐԱՑ.-ՀԱՆԴԷՍԸ մօտ 80 պատկերներով և 550 էջ բովանդակութեամբ։ Գինը ոսկեզօծ կազմով 1 ր. 20 կոպ.

Դիմել. Тифлисъ, Мадатовская, 15, Е. Топчяну. Արտասահմանից. Tiflis, Madatowskaia 15. E. Toptschian. (հ. կ.) 8—16

Дозволено цензурою. Тифлисъ, 1-го декабря 1904 г. Ցպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.